

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/3

31 մարտի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Կարեն Ղանդիլյանի 16.03.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 13.02.2015 թ-ի թիվ 1805 որոշման դեմ:

Քաղաքացի Կարեն Ղանդիլյանի գանգատում բերված փաստարկները.

02.02.2015 թ-ին ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության /այսուհետ՝ Հարկային մարմին/ կողմից փոստային ծառայության միջոցով ուղարկվել է «Հիշեցում-ծանուցում», որով հայտնվել է, որ համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության ստացած տեղեկությունների Կարեն Ղանդիլյանի կողմից 2014 թ-ի 4-րդ եռամսյակում կատարվել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված ԱԱՀ-ով հարկվող գործարք, որի վերաբերյալ հարկային տեսչություն չի ներկայացվել համապատասխան ԱԱՀ-ի հաշվարկ և առաջարկվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում հարկային տեսչություն ներկայացնել կատարված գործարքը հաստատող համապատասխան փաստաթղթեր /շարժական գույքի ձեռք բերման և օտարման պայմանագրերի և սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները և այլն/:

Քաղաքացի Կարեն Ղանդիլյանը (այսուհետ նաև գանգատաբեր) սահմանված ժամկետում ներկայացել է հարկային տեսչություն և ներկայացրել տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրերի պատճենները, ինչպես նաև պարզաբանել, որ չի կատարել «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված ԱԱՀ-ով հարկվող գործարք, մտածելով, որ այդ փաստաթղթերը ուսումնասիրելու հիման վրա ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության աշխատակիցն ընդունել է այն փաստը, որ ԱԱՀ-ով հարկվող գործարք չի կատարվել: Սակայն հետագայում, ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության պետի կողմից 13.02.2015 թ-ին ընդունվել է հարկ վճարողի կողմից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 1805 որոշումը քաղաքացի Կարեն Ազատի Ղանդիլյանից 90.018 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Գանգատաբերը գտնում է, որ նշված որոշմամբ խախտվել են իր իրավունքները:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով»:

Մասնավորապես, վերլուծելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջները և համադրելով այն սույն գործի նյութերի հետ, գանգատաբերը գտնում է, որ հարկային մարմինը սխալ է կիրառել նշված հոդվածի կանոնները, քանի որ դեռևս 20.10.2010 թ-ին նրա կողմից ձեռք բերվել մոխրագույն արծաթագույն «Օպել Վեկտրա» մակնիշի ավտոմեքենա, թողարկման տարին 2000 թվական, սեփականության վկայական՝ թիվ 000159, որն անձնական օգտագործումից երեք տարի 8 ամիս անց վաճառել է 17.06.2014թ-ին: 17.02.2014 թ-ին ձեռք է բերել «Օպել Աստրա» թեթև մարդատար ավտոմեքենա, թողարկման տարին 1998թ, որը վաճառել է 22.11.2014 թ-ին:

Գանգատաբերը գտնում է, որ համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի ապրանքի մատակարար չի համարվում, քանի որ ինչպես առաջին ավտոմեքենան երեք տարի 8 ամիս, այնպես էլ՝ երկրորդ ավտոմեքենան ութ ամիս շահագործել է անձնական, ընտանեկան կարիքները հոգալու համար:

Բացի այդ, առաջին ավտոմեքենան ձեռք է բերել 20.10.2010 թ-ին և համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի բ/ ենթակետի, երկրորդ ավտոմեքենան պետք է վաճառվեր տվյալ ավտոմեքենայի ձեռքբերմանը մեկ օրացուցային տարին չգերազանցող ժամանակահատվածում, այսինքն՝ երկրորդ ավտոմեքենան, ըստ օրենքի, մինչև 20.10.2011 թ-ը պետք է վաճառվեր, սակայն երկրորդ ավտոմեքենան վաճառվել է առաջին ավտոմեքենայի ձեռքբերմանը մեկ օրացուցային տարին գերազանցող ժամանակահատվածում երեք տարի մեկ ամիս երկու օր անց՝ 22.11.2014 թ-ին: Հարկ է նշել նաև, որ երկրորդ ավտոմեքենայի ձեռքբերմանը /17.02.2014թ./ մեկ օրացուցային տարին չգերազանցող ժամանակահատվածում մինչև 17.02.2015 թ-ը, այլ ավտոմեքենա գանգատաբերը չի վաճառել, որպեսզի համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի բ/ ենթակետի՝ որպես ֆիզիկական անձ ապրանքի մատակարար համարվի: Հետևաբար ԱԱՀ-ով հարկվող գործարք չի կատարվել, այսինքն՝ ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության պետի 13.02.2015 թ-ի թիվ 1805 որոշմամբ խախտվել են գանգատաբերի իրավունքները:

Ելնելով վերոգրյալից՝ քաղաքացի Կարեն Ղանդիլյանը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության պետի 13.02.2015 թ-ի հարկ վճարողի կողմից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 1805 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետը, քննարկելով քաղաքացի Կարեն Ղանդիլյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 09.02.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 90.018 դրամ, որն ամբողջությամբ ԱԱՀ-ի գծով է: Արդյունքում ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի կողմից 13.02.2015 թ-ին ընդունվել է թիվ 1805 որոշումը քաղաքացի Կարեն Ղանդիլյանից 90.018 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 13.02.2015 թ-ի թիվ 1805 որոշմամբ քաղաքացի Կարեն Ղանդիլյանից 90.018 դրամ ԱԱՀ-ի գումար գանձման առաջադրելու համար հիմք են ընդունվել հետևյալ փաստական հանգամանքները:

ՀՀ ճանապարհային ոստիկանությունից ստացված տեղեկությունների համաձայն քաղաքացի Կարեն Ղանդիլյանը (անձ. AH 0318939) բնակվող ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Չաքարիա Քանաքեռցու 151/1, բն. 37 հասցեում 2014 թ-ի ընթացքում վաճառել է թվով 2 (երկու) ավտոմեքենա: Մասնավորապես, Կարեն Ղանդիլյանի (վաճառող) և Մարիա Բարխուդարովայի (գնորդ) միջև 17.06.2014 թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր», որի համաձայն Կարեն Ղանդիլյանը Մարիա Բարխուդարովային է վաճառել «Օպել Վեկտրա» մակնիշի 2000 թ-ի արտադրության ավտոմեքենա: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն վաճառվող «Օպել Վեկտրա» մակնիշի ավտոմեքենան Կարեն Ղանդիլյանին սեփականության իրավունքով պատկանում է (ձեռք է բերվել) 20.10.2010 թ-ից:

Այնուհետև, Կարեն Ղանդիլյանի (վաճառող) և Գոհար Ոսկանյանի (գնորդ) միջև 22.11.2014 թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր», որի համաձայն Կարեն Ղանդիլյանը Գոհար Ոսկանյանին է վաճառել «Օպել Աստրա» մակնիշի 1998 թ-ի արտադրության ավտոմեքենա: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն

վաճառվող «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենան Կարեն Ղանդիլյանին սեփականության իրավունքով պատկանում է (ձեռք է բերվել) 17.02.2014 թ-ից:

Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքացի Կարեն Ղանդիլյանի կողմից 22.11.2012 թ-ի Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրով «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենայի վաճառքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն համարվում է ապրանքի մատակարարում, հետևյալ հիմնավորմամբ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

...

բ. մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում»:

Քննարկվող դեպքում քաղաքացի Արա Թորոսյանի կողմից իրականացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարման գործարք, այն է՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ կատարվել է նրա սեփականությունը հանդիսացող ավտոմեքենաների օտարում, որոնցից երկրորդն օտարվել է դրա ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ քաղաքացի Կարեն Ղանդիլյանը 2014 թ-ի 4-րդ եռամսյակի համար պետք է ներկայացներ ԱԱՀ հաշվարկ և դրանում արտացոլեր վերը նշված «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենայի վաճառքից առաջացած ԱԱՀ-ի պարտավորությունը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 13.02.2015 թ-ի թիվ 1805 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՍՅԱՆ**